**Արձանագրություն N 2**

**«ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ-25/98» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնում կատարելու ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու մասին**

ք. Վանաձոր

«21» հոկտեմբերի 2025թ.
ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ՝** Տարոն Թորոսյան

**Անդամներ՝** Անահիտ Ջանազյան

Վահրամ Վանյան

**Գնումները համակարգող՝** Տաթև Մաշինյան

**1.Հրավերում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը**

1.1 Հիմք ընդունելով ՀՀ Պետական վերահսկողական ծառայության 20 հոկտեմբերի 2025թվականի թիվ Ե/2147-25 գրությունը (կցվում է)՝ ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ-25/98 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ-25/98» ծածկագրով հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժիններում կատարել փոփոխություն:

1.2 Մասնավորապես՝ 1-ին չափաբաժնում

| Չ/Հ | Անվանումը | Բնութագիրը | Չափման միավոր | Քանակ |
|---|---|---|---|---|
| | | | 5 | 6 |
| 1 | 2 | 3 | | |
| 1 | Համակարգիչ /աշխատանքային/ | Պրոցեսոր՝ Core i5-13000 13-րդ սերունդ, Պրոցեսորի միջուկների քանակ՝ նվազագույնը 10, Հոսքերի քանակը՝ նվազագույնը 16, Պրոցեսորի cashe հիշողություն՝ նվազագույնը 12MB, Տակտային հաճախականություն՝ նվազագույնը 2,9 ԳՀց,/ Մայրական սալիկ՝ ASUS կամ համարժեք, Օպերատիվ հիշողություն՝ DDR4, ծավալը՝ նվազագույնը 16 Gb նվազագույնը 2666 MHz տակտային հաճախականությունով, Կոշտ սկավառակ (SSD)՝ նվազագույնը 512GB TEAM GROUP կամ LEXAR, Կոշտ սկավառակ (HDD)՝ նվազագույնը 1TB՝ նվազագույնը 7200rpm-ով, Սնման բլոկի հզորությունը՝ նվազագույնը 600վտ Cylon կամ համարժեք, Հովացման համակարգ Cooler 4pin, Օպերացիոն համակարգը՝ windows 11 home (լիցենզավորված)/ Օֆֆիսե փաթեթ (լիցենզավորված, Ավտոկադ /լիցենզավորված Երաշխիք՝ 730 օր: | հատ | 10 |

Փոխարինել

| Չ/Հ | Անվանումը | Բնութագիրը | Չափման միավոր | Քանակ |
|---|---|---|---|---|
| | | | 5 | 6 |
| 1 | 2 | 3 | | |
| 1 | Համակարգիչ /աշխատանքային/ | Պրոցեսոր՝ Core i5-13000 13-րդ սերունդ, Պրոցեսորի միջուկների քանակ՝ նվազագույնը 10, Հոսքերի քանակը՝ նվազագույնը 16, Պրոցեսորի cashe հիշողություն՝ նվազագույնը 12MB, Տակտային հաճախականություն՝ նվազագույնը 2,9 ԳՀց,/ Մայրական սալիկ՝ ASUS կամ ASRock, որը կպարունակի ամենաքիչը 8USB պորտ, որից 4-ը կլինեն դիմացից: Օպերատիվ հիշողություն՝ DDR4, ծավալը՝ նվազագույնը 16 Gb նվազագույնը 2666 MHz տակտային հաճախականությունով, Կոշտ սկավառակ (SSD)՝ նվազագույնը 512GB TEAM GROUP կամ LEXAR, Կոշտ սկավառակ (HDD)՝ նվազագույնը 1TB՝ նվազագույնը 7200rpm-ով, Սնման բլոկի հզորությունը՝ նվազագույնը 600վտ կամ համարժեք, Հովացման համակարգ Cooler 4pin, Օպերացիոն համակարգը՝ windows 11 home (լիցենզավորված)/ Օֆֆիսե փաթեթ (լիցենզավորված, Ավտոկադ /լիցենզավորված Երաշխիք՝ 730 օր: | հատ | 10 |

2-րդ չափաբաժին՝

| Հ/Հ | Անվանումը | Բնութագիրը | Չափման միավոր | քանակ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 5 | 6 |
| 2. | **Համակարգիչ /աշխատանքային միղենկարտա/** | Պրոցեսոր՝ Core i5-13000 13-րդ սերունդ, Պրոցեսորի միջուկների քանակ՝ նվազագույնը 10, Հոսքերի քանակը՝ նվազագույնը 16, Պրոցեսորի cashe հիշողություն՝ նվազագույնը 12MB, Տակտային հաճախականություն՝ նվազագույնը 2,9 ԳՀց,/ Մայրական սալիկ՝ ASUS կամ համարժեք, Օպերատիվ հիշողություն՝ DDR4, ծավալը՝ նվազագույնը 16 Gb նվազագույնը 2666 MHz տակտային հաճախականությունով, Կոշտ սկավառակ (SSD)՝ նվազագույնը 512GB TEAM GROUP կամ LEXAR, Կոշտ սկավառակ (HDD)՝ նվազագույնը 1TB՝ նվազագույնը 7200rpm-ով, Սնման բլոկի հզորությունը՝ նվազագույնը 600վտ Cylon, Հովացման համակարգ Cooler 4pin, տեսաքարտ GTX 1660, Օպերացիոն համակարգը՝ windows 11 home (լիցենզավորված)/ Օֆֆիսե փաթեթ (լիցենզավորված, Ավտոկադ /լիցենզավորված Երաշխիք՝ 730 օր: | հատ | 4 |

Փոխարինել՝

| Հ/Հ | Անվանումը | Բնութագիրը | Չափման միավոր | քանակ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 5 | 6 |
| 2. | **Համակարգիչ /աշխատանքային միղենկարտա/** | Պրոցեսոր՝ Core i5-13000 13-րդ սերունդ, Պրոցեսորի միջուկների քանակ՝ նվազագույնը 10, Հոսքերի քանակը՝ նվազագույնը 16, Պրոցեսորի cashe հիշողություն՝ նվազագույնը 12MB, Տակտային հաճախականություն՝ նվազագույնը 2,9 ԳՀց,/ Մայրական սալիկ՝ ASUS կամ ASRock, որը կպարունակի ամենաքիչը 8USB պորտ, որից 4-ը կլինեն դիմացից:, Օպերատիվ հիշողություն՝ DDR4, ծավալը՝ նվազագույնը 16 Gb նվազագույնը 2666 MHz տակտային հաճախականությունով, Կոշտ սկավառակ (SSD)՝ նվազագույնը 512GB TEAM GROUP կամ LEXAR, Կոշտ սկավառակ (HDD)՝ նվազագույնը 1TB՝ նվազագույնը 7200rpm-ով, Սնման բլոկի հզորությունը՝ նվազագույնը 600վտ, Հովացման համակարգ Cooler 4pin, տեսաքարտ GTX 1660, Օպերացիոն համակարգը՝ windows 11 home (լիցենզավորված)/ Օֆֆիսե փաթեթ (լիցենզավորված, Ավտոկադ /լիցենզավորված Երաշխիք՝ 730 օր: | հատ | 4 |

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

**2.Գնահատող հանձնաժողովի որոշման մասին**

2.1 Գնահատող հանձնաժողովը հաստատեց փոփոխված հրավերի տեքստը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Տարոն Թորոսյան

հանձնաժողովի անդամներ՝ ____________ Անահիտ Ջանազյան

____________ Վահրամ Վանյան

Գնումները համակարգող՝ ____________ Տաթև Մաշինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**Ե/2147-25** **0077, ք. Երևան, Մ. Մաշտոցի պողոտա 47**
**20 Հոկտեմբերի, 2025թ.**

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Փելեշյան,**

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, գնումների ոլորտում մրցակցության ապահովման և խտրականության բացառման նպատակով իրականացնում է մշտադիտարկում, որի շրջանակներում Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով 2025 թվականի հոկտեմբերի 14-ին տեղեկագրում *(օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք)* հրապարակված «ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ-25/98» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) վերլուծությամբ արձանագրվել են գնումների մասին օրենսդրության պահանջների անհամապատասխանություններ:

Մասնավորապես, Հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնման առարկաների հատկանիշների բնութագրերը պարունակում են «կամ համարժեք» բառերը:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 5-րդ մասի՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, **բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն**

**առանց դրանց:** Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Միաժամանակ, Օրենքի կիրարկման կարգի՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: **Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը**:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով՝ առաջարկում ենք քննարկել և հրավերում, Օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, կատարել փոփոխություններ՝ ձեռնարկված քայլերի մասին տեղեկացնելով Ծառայությանը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ** **ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

*Կատարող՝ Անի Ախոյան*
*Ստորաբաժանում՝ Գնումների գործընթացների վերահսկողության վարչություն*
*Հեռ.՝ 010 31 32 14*